

## ԵԼՀ Ֆակուլտետի գիտխորհրդի՝

30.01.2023 թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրություն

### Օրակարգ

1. 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

ԵԼՀ Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփմանը: Դեկանը ներկայացրեց տվյալները և նշեց, որ ամեն բան ընթացել է իր բնականոն հունով: Ստացված արդյունքները բավարար են:

Գ.Բարսեղյանը անդրադարձավ նաև օրակարգի երկրորդ հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը:

### ԼՍԵՑԻՆ՝

ԵԼՀ Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

### ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց երկրորդ կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. Բարսեղյան Հռիփսիմե Խաչատուրի «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ /:
2. Գալստյան Անժելիկա Արայի «Լեզվաբանություն» մասնագիտության

«Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Ֆ.Վերֆելի անվան կրթաթոշակ/:

3. Մարգարյան Մերի Արմանի «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն» կրթական ծրագրի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի /Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ/: Որոշումն ընդունվեց միաձայն:

### 3. Ընթացիկ հարցեր

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Գ. Սարգսյանը ներկայացրեց ամբիոնի նախաձեռնությունը՝ աշխատանքային խումբ կազմելու՝ Ժերար Դեդեյանի «Les Justes et gens de bien du génocide des Arméniens» և Ժան Մարտենի «Mémoires historique et géographiques sur l'Arménie» հայագիտական գրքերի թարգմանությունը իրականացնելու նպատակով: Գ.Բարսեղյանը հավելեց, որ ֆրանսիական բանասիրության ամբիոնը կազմված է գիտակ մասնագետներով և հույս հայտնեց, որ սպասված արդյունքը տպավորիչ կլինի:

Գ.Բարսեղյանը հորդորեց ամբիոնի վարիչներին, որ դասախոսներին ծանրաբեռնեն այնպես, որ ներառվեն ուսումնական երկու կիսամյակները /անգամ 0.25 ծանրաբեռնվածությամբ դասախոսներին/, խնդրեց նաև, որ դասախոսների ծանրաբեռնվածությունը այնպես կազմվի, որ չխաթարի կազմվող դասացուցակին և ավելորդ բարդություններ չառաջացնի:

## Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին.

- Գերմանական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Բ. Քոչարյանի գիտական ղեկավար նշանակել ԲՊՀ գերմաներենի ամբիոնի վարիչ՝ Բ.Գ.Թ. դոցենտ Էլիզա Ղազարյանին:
- Կազմել Ֆրանսիական բանասիրության ամբիոնում աշխատանքային խումբ և երաշխավորել Ժերար Դեդեյանի «Les Justes et gens de bien du génocide des Arméniens» և Ժան Մարտենի «Mémoires historique et géographiques sur l'Arménie» գրքերի թարգմանությունը:
- Երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Վահե Արսենյանի գիտական ղեկավարության թույլտվությունը՝ Ժ.01.07, «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:
- Երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոց. Ա. Սեդրակյանի «20-րդ դարի ֆրանսիական պոեզիայի հիմնական ուղենիշները» մենագրության լրամշակված վերահրատարակությունը:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝



Մ.Դավալյան

30.01.2023 թ.